ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

*1967 թ. մարտի 24—26-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Ներածական խոսքով ժողովը բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։*

*Ամփոփելով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1966 թվականի գործունեությունը,—ասաց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը,—կարող ենք գոհունակությամբ նշել, որ ձեռք ենք բերել նվաճումներ ինչպես ժողովրդական տնտեսության, այնպես էլ գիտության բնագավառում։ Ամենախոշոր երևույթը մեր կյանքում, հաշվետու տարում, դա ՍՄԿԿ XXIII համագումարն էր, որը մշակեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյա պլանը և ընդգծեց գիտության դերը այդ պլանի հաջող կենսագործման ուղղությամբ, նշեց, որ գիտությունը պետք է սերտորեն կապված լինի արտադրության հետ, դառնա արտադրական խոշոր ուժ։ Այժմ գիտությունը թափանցել է մեր կյանքի բոլոր օղակները։ Ահա թե ինչու,—ընդգծեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը,—մենք, որպես գիտնականներ, մեծ պատասխանատվություն ենք զգում ժողովրդի առջև։*

*Անդրադառնալով մաթեմատիկական գիտության բնագավառին, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ասաց, որ ակադեմիայի նախագահությունը միշտ հատուկ ուշադրություն է դարձրել և այժմ էլ դարձնում է գիտության այդ առաջատար բնագավառին։ Հատկապես կարևոր դեր են կատարում համեմատական մաթեմատիկան, մաթեմատիկական ֆիզիկան, հաշվողական մաթեմատիկան, որոնց ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվել։ Ինչ վերաբերում է կիբերնետիկային, ապա պետք է նշել, որ թեև ունենք որոշ հաջողություններ, հատկապես կիբերնետիկան բժշկության մեջ օգտագործելու ուղղությամբ, բայց կիբերնետիկական թարգմանական խնդիրը դեռևս բավարար համարել չի կարելի։*

*Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը գիտնականների ուշադրությունը հրավիրելով ֆիզիկա-տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական գիտությունների զարգացման վրա, ընդգծեց գիտության այդ ճյուղերի հսկայական դերը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Նուրբ-օրգանական քիմիայի բնագավառում ձեռք բերած նվաճումները արդեն ճանաչում են գտել մեր Միության մեջ։ Հաջող է ընթանում բիոքիմիական ճյուղի աշխատանքը՝ հատկապես ներվային համակարգության պրոբլեմի մշակման ուղղությամբ։ Սակայն քիմիայի բնագավառի թերությունը՝ դեռևս գիտական արդյունքների արտադրության մեջ ներդրման ետ մնալն է։ Անհրաժեշտ է,—ընդգծեց Վ. Հ. Համբարձումյանը,—ոչ միայն ստեղծել, այլև այն ներդնել արտադրության մեջ։*

*Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հայ երկրաբանների առջև խնդիր դրեց՝ թողնել հետազոտման հին մեթոդները և կիրառել ճշգրիտ մեթոդներ։ Մեր երկրաբանների մոտ,—ասաց նա,—կոյություն ունի «կաբինետային երկրաբաններին» պրակտիկա, որոնք գերադասում են շատ նստել կաբինետում, քան թե լինել դաշտում։ Անշուշտ մեծ նշանակություն ունի լաբորատոր հետազոտությունը, բայց հիմնականը դաշտային աշխատանքն է։*

*Անդրադառնալով հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների առջև դրված խնդիրներին, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը գիտնականների ուշադրությունը հրավիրեց գիտա-հետազոտական կոլեկտիվ աշխատանքի ձևերի, քանակական մեթոդի կիրառման, կադրերի պատրաստման, գիտական աշխատողների կողմից լեզուների տիրապետման և այլ հարցերի վրա։ Աններելի է, ասաց Վ. Հ. Համբարձումյանը, որ մինչև հիմա չունենք հայ ժող. պատմության բազմահատորյակը, իսկ մեր պատմաբանները շատ դանդաղ են շարժվում։ Հաջորդ հիմնական թերությունը, ոչ միայն հասարակական գիտությունների, այլև մյուս բնագավառներում, դա բազմաթեմայնությունն է։*

Վերջացնելով բացման խոսքը, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ասաց. մեր գիտնականների առաջնահերթ խնդիրն է լավ նվերներով դիմավորել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փառապանծ 50-ամյակը։

Ժողովում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1966 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանը։ Զեկուցողը մանրամասը վերլուծեց ակադեմիայի սիստեմում գտնվող բոլոր գիտական հիմնարկների, բաժինների մեկ տարվա գործունեությունը, անդրադարձավ գիտական մշակումները պրակտիկայում արմատավորելու հարցերին։

Հաշվետու տարում,—նշեց զեկուցողը,—մեր երկրի կյանքում պատմական խոշոր իրադարձություն էր ՍՄԿԿ XXIII համագումարը, որը գիտականորեն հիմնավորված հեռանկարներ մշակեց և որոշեց կոմունիստական շինարարության հերթական խնդիրները, սովետական գիտնականների առաջ կարևոր խնդիրներ դրեց՝ կապված ժամանակի ակտուալ գիտական պրոբլեմների լուծման հետ։

Այնուհետև, ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը մանրամասը վերլուծեց ակադեմիայի ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական, քիմիական, երկրի մասին, կենսաբանական, հասարակական գիտությունների բաժանմունքների, խորհուրդների և հանձնաժողովների մեկ տարվա գործունեությունը, ամփոփեց ժողովրդական տնտեսության մեջ գիտական արդյունքների ներդրման, միջազգային սիտական կապերի ամրապնդման, սեսիաների, կոնֆերանսների և սիմպոզիումների հրավիրման, կադրերի գծով տարվող աշխատանքի, կապիտալ շինարարության, նյութատեխնիկական մատակարարման վերաբերյալ հարցերը։

1966 թ. ընթացքում ակադեմիայի գիտա-հետազոտական հիմնարկներում մշակվել է 474 թեմա ընդգրկող 80 պրոբլեմ։

Ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի 6 հիմնարկների կողմից անցած տարի մշակվել է 19 պրոբլեմ՝ բաղկացած 71 թեմայից։ Գիտության և պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող արդյունքներ է ստացել Բյուրականի աստղադիտարանի գիտական կոլեկտիվը արտագալակտիկական աստղագիտության բնագավառում։

Շմիդեի սիստեմի մեկ մետրանոց հեռադիտակով, աշխարհում առաջին անգամ, դիտարկվել են երկնքի որոշ հատվածներ, որոնք ընդգրկում են մինչև 17-րդ մեծության աստղերի ու գալակտիկաների սպեկտրերը։ Հայտնաբերվել են 70 գալակտիկաներ՝ արտասովոր ուժեղ ուլտրամանիշակագույն ճառագայթումով։

Հայ մաթեմատիկոսներն ու մեխանիկները հետազոտել են ֆունկցիաների տեսության, ֆունկցիոնալ անալիզի ու դիֆերենցիալ հավասարումների, առաձգականության մաթեմատիկական տեսության, թաղանթների ու պլաստինների, սողքի ու ամրության տեսության վերաբերյալ կարևոր պրոբլեմներ։

Հաշվետու տարում զգալի հաջողություններ է ձեռք բերել ՀՍՍՀ ԳԱ և Երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնը։ Ակադեմիայի ֆիզիկա-տեխնիկական գիտահետազոտական կենտրոնական լաբորատորիան շարունակում է իր աշխատանքները բարձր մոլեկուլյար միացությունների ֆիզիկայի, մագնիսական երևույթների և մետաղաֆիզիկայի ուղղություններով։ Բյուրականի փորձա-մեխանիկական լաբորատորիան կարևոր հետազոտություններ է կատարել աստղագիտական հայելիների ու մետաղահատման համար մետաղյա նյութերն օգտագործելու բնագավառում։

Գիտական լուրջ հետազոտություններ են կատարվել երկրի մասին գիտությունների բնագավառում։

Հայաստանի ընդերքը ուսումնասիրող գիտնականների 1966 թ. կատարած գիտա-հետազոտական աշխատանքները հնարավորություն են տվել գտնելու նոր հանքավայրեր, ճշտելու պղնձի, մոլիբդենի, ոսկու, երկաթի հանքատեսակների տեղադրությունն ու պաշարները։ Գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտը մշակել է «Երկրի կառուցվածքն ու զարգացումը» պրոբլեմի 10 թեմա։

Ակադեմիայի քիմիական գիտությունների բաժանմունքի նուրբ օրգանական քիմիայի, օրգանական քիմիայի ու բիոքիմիայի ինստիտուտները, քիմիական ֆիզիկայի լաբորատորիան հաշվետու տարում մշակել են 39 թեմա ընդգրկող 6 պրոբլեմ, որոնք ունեն տեսական ու գործնական կարևոր նշանակություն։ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի գիտնականները շարունակում են որոնումներ կատարել արտաանոթային ու նեյրոնոգենական հիվանդությունների բուժման ու պրոֆիլակտիկայի նոր միջոցների հայտնաբերման համար։ Օրգանական քիմիայի ինստիտուտի քիմիկոս գիտնականները մշակել են արդյունաբերության համար կարևոր նշանա-

կություն ունեցող քիմիական մի շարք միացությունների ստացման նոր մեթոդներ։ Բիոքիմիայի բնագավառի գիտնականները ուսումնասիրել են «մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի» կոմպլեքսային պրոբլեմի մի շարք հարցեր։

Տարեկան հաշվետվության մեջ նշանակալի տեղ էր հատկացված կենսաբանական գիտությունների բնագավառի գիտա-հետազոտական աշխատանքներին։ Այդ բաժանմունքի մեջ մտնող 10 գիտական հիմնարկներ հաշվետու տարում մշակել են 81 թեմա ընդգրկող 20 պրոբլեմ, կատարելով 1966 թ. պլանով նախատեսված աշխատանքները։

Բուսաբանության և կենդանաբանության ինստիտուտի ուշադրության կենտրոնում է գտնվել մեր հանրապետության բուսական ու կենդանական աշխարհի ուսումնասիրությունը։ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնականները 1966 թ. հրատարակել են 65 աշխատություն, որոնք նվիրված են եղել նյարդային համակարգի զանազան հատվածների գործունեության մեխանիզմների ուսումնասիրությանը, անասնապահության համար մեծ արժեք ներկայացնող հարցերին։

Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի պատմության, տնտեսագիտության, Մ. Աբեղյանի անվան գրականության, Հր. Աճառյանի անվան լեզվի, հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների, փիլիսոփայության և իրավունքի, արևելագիտության սեկտորների գիտնականների գործունեությունը ընթացել է մեծ Հոկտեմբերի փառապանծ 50-ամյակը արժանավայել դիմավորելու նշանարանով։

(Տես հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովի մասին ստորև տպագրված հաղորդումը)։

Անդրադառնալով գիտությունների ակադեմիայի աշխատանքների թերություններին, ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը նշեց, որ գոյություն ունի բազմաթեմայնություն, ձգձգվում են առանձին թեմաների կատարման ժամկետները։ Դեռևս ուժեղ չէ գիտական հիմնարկների կապը արտադրության հետ։ Լուրջ թերություններ կան կադրերի պատրաստման գործում։

Հաշվետու զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վ. Գուլքանյանը, քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ Ա. Նալբանդյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Հ. Մաղաքյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Իոսիֆյանը, Ա. Առաքելյանը, Ա. Ալիխանյանը, Մ. Ներսիսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ծ. Ադայանը, պրոֆեսոր Խ. Միրիմանյանը։

Ժողովում քննարկվեցին հետևյալ զեկուցումները. «Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում (1918—1920 թթ.)» (զեկ. պատմական գիտությունների դոկտոր Գ. Ա. Գալոյան), «Օրգանական սինթեզում ամոնիումային միացությունների օգտագործման նոր ուղիներ» (զեկ. ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Թ. Բաբայան), «Ճառագայթման տեսության մի քանի հարցեր» (զեկ. ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Լ. Տեր-Միքայելյան), «Ֆոտոսինթեզը և բույսերի արմատային սիստեմը» (զեկ. ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. Ղազարյան)։

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

ՀՍՍՀ ԳԱ կանոնադրության համաձայն անցկացվեցին ակադեմիայի նախագահության անդամների մասնակի ընտրություններ։ Վիցե-պրեզիդենտներ և նախագահության անդամներ ընտրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Ս. Մկրտչյանը և Ա. Ի. Հովհաննիսյանը։

Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար և նախագահության անդամ ընտրվեց ակադեմիկոս Գ. Դավթյանը։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամներ և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ ընտրվեցին Հ. Մաղաքյանը (երկրի մասին գիտությունների բաժանմունք), Ա. Նալբանդյանը (քիմիական գիտությունների բաժանմունք)։ Նախագահության անդամ ընտրվեց ակադեմիկոս Հ. Բունիաթյանը։

ՀՍՍՀ ԳԱ պատվավոր անդամներ ընտրվեցին ՍՍՀՄ նավատորմի ծովակալ Հ. Իսակովը և Զ. Խանզադյանը (Ֆրանսիա)։

Ընդհանուր ժողովը հաստատեց ինստիտուտների դիրեկտորներին, ինչպես նաև մասնակի փոփոխություններ մտցրեց ՀՍՍՀ ԳԱ կանոնադրության մեջ։

Ժողովի աշխատանքներին մասնակցեցին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, կուսակցության Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տե-

դակալ Լ. Ստեփանյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ս. Թովմասյանը։

## ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի հաշվետու ժողովում, որը տեղի ունեցավ 1967 թ. մարտի 22-ին, բաժանմունքի հիմնարկների 1966 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ս. Տ. Երեմյանը։

Ամփոփելով գիտական հիմնարկների մեկ տարվա կատարած աշխատանքները, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ բաժանմունքի գործունեությունը 1966 թ. ընթացել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակը արժանավայել դիմավորելու նշանաբանով։

Տնտեսագիտության ինստիտուտի գիտա-հետազոտական գործունեությունը, հաշվետու տարում, բնորոշվում է տնտեսական գիտության տեսության ու պրակտիկայի մի շարք կարևորագույն հարցերի մշակումով։ Ինստիտուտի գիտնականները աշխատանքներ են տարել հանրապետության սոցիալիստական արտադրության արդյունավետության հետազոտման ուղղությամբ։ Ինչպես օրինակ՝ հիմնական ֆոնդերի և կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացումը, աշխատանքային ռեսուրսների շահավետ օգտագործումը, արտադրության ճյուղային կառուցվածքի առաջընթաց տեղաշարժերը և արտադրության մեջ նյութական շահագրգռվածությունը։

«Կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետությունը» և «Ժողովրդական տնտեսության պլանավորման կատարելագործումը» պրոբլեմների գծով մշակվել է 14 թեմա, որից հաշվետու տարում ավարտվել է 7 թեմա։ «Կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետությունը» պրոբլեմի գծով ավարտվել է «Հայկական ՍՍՀ արդյունաբերության հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը» թեման։ Տնտեսագետները մշակել են տնտեսական-մաթեմատիկական մոդել՝ ՀՍՍՀ արդյունաբերության հիմնական ճյուղերի և հիմնական ֆոնդերի վերարտադրության պլանայնության խնդիրները պարզելու համար։ Բացի դրանից, մշակվել է տնտեսական-մաթեմատիկական մոդել առանձին ճյուղերի հիմնական ֆոնդերի շահավետ օգտագործման համար։ Այդ մոդելը կգործադրվի հանրապետության հաստոցաշինական արդյունաբերության մեջ, որի ներդրման դեպքում հաստոցաշինության մեջ պրոդուկցիայի բաց թողումը կաճի 91,4 տոկոսով, իսկ հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը՝ 88,1 տոկոսով։

Ինստիտուտի գիտական աշխատողները հաշվետու տարում գիտա-հետազոտական աշխատանքներ են տարել այնպիսի կարևոր, ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող թեմաների շուրջը, ինչպիսիք են՝ «Ժողովրդական տնտեսության ճյուղերի հարաբերակցությունն ու համակարգը», «Բնակչության վերարտադրությունը և Հայկական ՍՍՀ-ի աշխատանքային ռեսուրսների օգտագործման բարելավման հիմնական խնդիրները» և այլն։ Վերոհիշյալ թեմաների շուրջը ուսումնասիրվել են՝ անձնական և հասարակական պահանջարկի ֆոնդերի հարաբերակցությունը, ՀՍՍՀ գյուղատնտեսության կառուցվածքի փոփոխության և զարգացման տեմպերը, սպասվող սննդամթերքների բաղադրակազմը և նրանց բարելավման ուղիները, ՀՍՍՀ ազգաբնակչության տեղաշարժերը և դրա սոցիալ-տնտեսական պատճառները, բանվորական որակյալ ուժի վերարտադրությունը և երիտասարդ բանվորական ուժի բալանսը և այլ հարցեր։

Տնտեսագիտության ինստիտուտի աշխատանքներում,—ասաց ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը,—սակայն, տեղ են գտել մի շարք թերություններ։ Անհրաժեշտ աշխատանք չի տարվել սոցիոլոգիական հարցերի ուսումնասիրման ուղղությամբ, կադրերի բացակայության պատճառով վերջին երեք տարում ինստիտուտում կրճատվել է 3 սեկտոր, 1966 թ. հրատարակչական պլանով նախատեսված 5-ի փոխարեն ինստիտուտը հրատարակել է 3 աշխատություն և այլն։

Այնուհետև, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը մանրամասն վերլուծեց պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվի գործունեությունը։ Հաշվետու տարում,—ասաց զեկուցողը,—ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքները տարվել են հետևյալ 9 ուղղությամբ՝ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության պատմություն. սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմություն. կապիտալիստական հասարակարգի առաջացումը և պատմությունը. ֆեոդալական հասարակարգի ծագումը և պատմությունը. ստրկատիրական հասարակարգի պատմությունը. հայկական գաղթավայրերի պատմությունը. պատմագրություն. «Հայ ժողովրդի պատմությունը»՝ 7 հատորով։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմության պրոբլեմի գծով վերջին տարիներին գիտա-հետազոտական աշխատանքներ են տարվել Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցերի շուրջը։

Սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության պրոբլեմի գծով մշակվող թեմաները վերաբերում են բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, կուլտուրական շինարարության և Հայաստանի սոցիալիստական քաղաքների պատմությանը։

Կապիտալիստական հասարակարգի ծագումը և նրա պատմությունը պրոբլեմի գծով աշխատանքներ են տարվել արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման, դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժման, Հայաստանում մարքսիզմի տարածման և այլ թեմաների շուրջը։

Ֆեոդալական հասարակարգի առաջացման և նրա պատմության պրոբլեմի գծով գրվում են մենագրական հետազոտություններ՝ նվիրված հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը (5—10-րդ դարերում), Հայաստանը Օսմանյան խալիֆայության կազմում (7—8-րդ դդ.), հայկական իշխանությունները փոքր Ասիայում և Կիլիկիայում, Հայաստանը թուրքսելջուկների տիրապետության ժամանակաշրջանում, սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 16—17-րդ դարերում և այլն։

Պատմության ինստիտուտի աշխատանքի առանցքն է կազմում,—նշեց ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը,—«Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը, որի զգալի մասը արդեն պատրաստ է, իսկ 6-րդ հատորը, որը վերնագրված է «Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», արդեն հանձնվել է տպագրության և լույս կտեսնի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։

Ինստիտուտի գիտական կոլեկտիվը զգալի աշխատանք է կատարել գաղթավայրերի պատմության պրոբլեմի գծով։ Ուսումնասիրվում են հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը Ռուսաստանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Բուլղարիայի և այլ երկրների, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի հետ։

Գիտա-հետազոտական աշխատանքներ են տարվում նաև պատմագրության, հայ պարբերական մամուլի պատմության, հին և միջին դարերի պատմության և այլ պրոբլեմների շուրջը։

Անդրադառնալով Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գործունեությանը ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ այն ընթացել է 6 հիմնական հետևյալ պրոբլեմների շուրջ. սովետական գրականության զարգացման օրինաչափությունները ժամանակակից էտապում, Մարքս-Լենինյան գրականագիտություն, հայ նոր գրականություն, հին հայոց գրականություն, հայ կլասիկների երկերի հրատարակություն և գրական կապեր։

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիմնական պրոֆիլն է հայոց լեզվի կառուցվածքի և նրա զարգացման օրինաչափությունների բազմակողմանի ուսումնասիրությունը։

Ինստիտուտը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի առթիվ պատրաստել է կոլեկտիվ մենագրություն՝ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», որն ընդգրկում է գրական հայերենի բոլոր դրսևորումները (գեղարվեստական գրականության լեզու, գիտական գրականության լեզու, խոսակցական լեզու և այլն)։

Սակայն լեզվի ինստիտուտի աշխատանքի վրա,—ասաց զեկուցողը,—բացասաբար է անդրադարձել կադրերի արտահոսքը, որի պատճառով էլ մի շարք թեմաներ մնացել են անավարտ։ ՀՍՍՀ ԳԱ նախագահության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի որոշմամբ լեզվի ինստիտուտում պետք է կազմակերպվեր տերմինաբանական սեկտոր, բայց մինչև օրս էլ չի լուծվել այդ հարցը, չնայած որ տերմինաբանությունը կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի զարգացման գործում։

Հաշվետու տարում բաժանմունքի հնագիտության և ազգագրության ինստիտուտը հետազոտական աշխատանքներ է տարել հիմնականում 3 պրոբլեմների ուղղությամբ։ Դրանք են՝ Հայաստանի հնագիտական ուսումնասիրություն, Հայաստանի ազգագրական ուսումնասիրություն, հայկական բանահյուսություն։

Հայաստանի հնագիտական ուսումնասիրության գծով հիմնական աշխատանքն է՝ «Հայաստանի հնագիտական ատլասի» ստեղծումը, որն ընդգրկելու է պատմական Հայաստանի տերիտորիայի մեջ հայտնի հնագիտական հուշարձանները։

Հաշվետու տարում ավարտվել են՝ «Հայաստանի հին բրոնզեդարյան կերամիկան», «Իջևան-Տավուշի շրջանի հնագույն հնագիտական հուշարձանները», «Վաղ-միջնադարյան Հայաստանի մետաղը, կերամիկան և ապակին» պրակները, «Դվին քաղաքը և նրա պեղումները» (2-րդ հատոր), «Վանական հողատիրություն Հյուսիսային Հայաստանում ըստ վիմագրական և մատենա-

գիտական աղբյուրներին» մենագրությունները։ Բավական աշխատանքներ են տարվել ազգագրական ուսումնասիրության, էքսպեդիցիոն-դաշտային աշխատանքների բնագավառում։

Խոսելով արվեստի ինստիտուտի մասին, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ արվեստագետ գիտնականները հաշվետու տարում իրենց գիտա-հետազոտական աշխատանքները տարել են հայկական երաժշտության, ճարտարապետության, թատրոնի և կինոյի, կերպարվեստի, կիրառական արվեստի, շեքսպիրագիտության պրոբլեմների վերաբերյալ 60 թեմաների շուրջը, որոնցից ավարտվել է 28 թեմա։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ ինստիտուտը հրատարակության է պատրաստել հետևյալ կոլեկտիվ աշխատությունները՝ «Հայկական սովետական արտահայտչական արվեստի պատմությունը», «Հայկական սովետական կերպարվեստի պատմությունը»։

Հաշվետու տարում փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գործունեությունը ընթացել է հետևյալ պրոբլեմների հետազոտման ուղղությամբ. սոցիալիզմի զարգացման և կոմունիզմին անցնելու օրինաչափությունները, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմ, հայ փիլիսոփայության պատմություն, գեղագիտություն, պետության և իրավունքի հարցեր։ Այդ պրոբլեմների շուրջը մշակվել են 25 թեմա, որից ավարտվել է 6-ը։ Ավարտվել են այնպիսի թեմաների հետազոտական աշխատանքներ, ինչպիսին են՝ ժամանակակից գիտա-տեխնիկական հեղաշրջումը, հասարակությունը և կուլտուրան և այլն։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի առիթով սեկտորը նախապատրաստել է «Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայկական պետականության զարգացումը» մենագրական հետազոտությունը։

Զեկուցողը կանգ առավ նաև սեկտորի աշխատանքի թերությունների վրա, մասնավորապես նշեց, որ մինչև այժմ չի վերացել բազմաթեմայնությունը, չեն տարվում կոնկրետ սոցիոլոգիական հետազոտումներ, լայն ծավալով չեն ուսումնասիրվում բնագիտության փիլիսոփայության պրոբլեմները, սիյուռքահայերի մոտ տեղի ունեցող գաղափարական տեղաշարժերը։

Վերլուծելով արևելագիտության սեկտորի գործունեությունը, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը նշեց, որ հաշվետու տարում արևելագետների ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ պրոբլեմները. ազգային-ազատագրական և բանվորական շարժումները Մերձավոր և Միջին արևելքում, Մերձավոր և Միջին արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականությունը, կուլտուրան, աղբյուրների հրապարակում և քրդագիտություն։ Հաշվետու տարում ավարտվել են այնպիսի թեմաների հետազոտումները, ինչպիսին են՝ «Արևմտյան Հայաստանը իմպերիալիստական տերությունների պլաններում 1900—1914 թթ.», «Միջոցառումները լուսավորության բնագավառում Թուրքիայում 1960 թ. հեղաշրջումից հետո», «Հայ-արաբական կուլտուրական կապերը Սիրիայում և Լիբանանում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո»։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 50-ամյակի առիթով սեկտորը պատրաստել է «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և ազգային-ազատագրական շարժումները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում» կոլեկտիվ աշխատությունը։

Հաշվետու ժողովում խոսվեց նաև գիտական հետազոտական աշխատանքների հրատարակության մասին։ Բաժանմունքի գիտական հիմնարկները 1966 թ. հրատարակել են 40 աշխատություն։ Սակայն հրատարակության հնարավորությունները դեռևս շատ սակավ են և չեն բավարարում ներկա պահանջները։

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի հաշվետու զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին գրականության ինստիտուտի դիրեկտոր Վ. Նալբանդյանը, Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ Հ. Ասլանյանը, ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր Ռ. Աղայանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ղարիբջանյանը։ Ելույթ ունեցողները կոնկրետ խնդիրներ դրեցին հասարակական գիտությունների բաժանմունքի առաջ՝ գիտա-հետազոտական աշխատանքների էլ ավելի բարելավման համար։

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Լ. Խաչիկյանը նշեց, որ հասարակական գիտությունների բաժանմունքը թույլ է կապված հանրապետության մյուս հասարակագիտական հիմնարկների, ինչպես նաև արտասահմանի հայագիտական կենտրոնների հետ։ Արտասահմանի հայագիտական կենտրոնների հետ կապի ստեղծման ու զարգացման նպատակով ընկ. Լ. Խաչիկյանը հարց բարձրացրեց հրավիրել հայագիտական կոնգրես։ Այնուհետև Լ. Խաչիկյանը քննադատական խոսք ասաց կադրերի պատրաստման ուղղությամբ տարվող անբավարար աշխատանքի մասին։ Նա մասնավորապես նշեց, որ կադրեր չկան հայկական մանրանկարչության,

բնագիտության և բժշկության պատմության գծով։ Միանգամայն վատ է աշխատանքը լեզուների ուսումնասիրության գործում։ Մենք չունենք բյուզանդագետներ, իրանագետներ, արաբագետներ։ Չնայած Երևանի պետական համալսարանը ունի արևելագիտության բաժին, բայց այն չի տալիս լավ կադրեր։

Մեր հուշարձանների, ձեռագրերի մեծ մասը,—ասաց Լ. Խաչիկյանը,—գտնվում է հանրապետության սահմաններից դուրս, սակայն միանգամայն անբավարար ենք զբաղվում դրանց բախտի հարցով։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ռ. Պ. Աղայանը իր ելույթում կանգ առավ սոցիոլոգիական պրոբլեմի ուսումնասիրության անհրաժեշտության վրա։ Նա հարց բարձրացրեց, ստեղծելու կոորդինացիոն խումբ՝ բաղկացած պատմաբաններից, փիլիսոփաներից, տնտեսագետներից, գրականագետներից, որոնք ուսումնասիրեն սոցիոլոգիական հարցերը։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը իր ելույթում նշեց, որ Հայաստանի գիտնականները հաշվետու տարում հսկայական աշխատանք են կատարել հասարակագիտական մի շարք կարևոր պրոբլեմների հետազոտման և ընդհանրացման ուղղությամբ։ Սակայն բաժանմունքի և ակադեմիայի նախագահության նախաձեռնությամբ մեր գիտնականների կարևոր հետազոտությունները չեն բարձրացվել համամիութենական գիտական մակարդակին։ Մեր գիտնականների կարևոր մենագրությունները և հետազոտությունները, հատկապես հայագիտության հարցերի մասին, չեն հրատարակվում Միության հրատարակչություններում։ Ավելին, հաճախ Միության մասշտաբով հրատարակվում են գրքեր, որտեղ հայագիտության, հայոց պատմության ու կուլտուրայի վերաբերյալ տարբեր հարցեր լուսաբանվում են ոչ բավարար գիտական հիմնավորվածությամբ, սակայն մենք անհրաժեշտ վերաբերմունք չենք ցուցաբերում նման կարգի պատմական փաստերը և երևույթները խեղաթյուրողների նկատմամբ։ Գ. Ղարիբջանյանը խնդիր է դնում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի և Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի տոնակատարության կապակցությամբ աշխուժացնել գիտական աշխատանքը, հրատարակել գիտական լուրջ ուսումնասիրություններ XX դարում Անդրկովկասում ծավալված ազգային-ազատագրական շարժումների, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, ժողովուրդների բարեկամության մասին։ Անհրաժեշտ է գիտական լուրջ հետազոտություններ կատարել և արժանավայել ձևով ներկայացնել համաշխարհային հասարակությանը հայ ժողովրդի ազգային մշակութային հարուստ ժառանգությունը։

Ընդհանուր ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանի «Ակադեմիկոս Հ. Օրբելու հայագիտական գործունեությունը» և պատմական գիտությունների դոկտոր Բ. Ն. Առաքելյանի «Ակադեմիկոս Հ. Օրբելին հայագետ-արևելագետ» զեկուցումները։